


անկարելի է՝ որ ամեն ընտանիք իր զգեստեղէնները՝ ինքը լուայ տանը մէջ։

Պ. Դիզլայի նոր գիտը թերեւս վերջ տայ նաեւ այս տեսակ ծանր խնդրոց։ Հաւանական թուի՝ որ ելքը տրականութեան զօրաւոր հասանքը, արագութեամբ պիտի մաքրէ և լուայ կատարելապէս ամեն տեսակ զգեստեղէնները, ինչպէս կը լուայ մարմինը՝ անոր կատարեալ մաքրութիւն տալով։

Եթէ այս հանճարաւոր ելքը տրագէտն ալ աշխատի իւր մեքենայով ջնջելու այս միկրոօններն, այն ատեն նա իրաւամբ մարդկութեան իրաքանչիւր ընտանեաց յատուկ բարեբարը պիտի հանդիսանայ¹։

Ն.



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

1. Շիննոց. պատկեր Սագի գիշարահների (տաճարահների) կեանքից. գրեց Ալոպատ. — Նոր Նախիջևան. տպարան Երբ. Յ. և Ս. Անգաւանների. 1898: 8°, 85 էջ, գին՝ 30 Կ.:

Կը յանձնարարենք յարգ. Հեղինակին՝ որ հրատարակելիք գրքերուն տպագրութեան ուշադրութիւն ընէր. վասն զի սոյն երկին մէջ՝ թէ ուղղագրութեան և թէ տպագրութեան սխալները՝ անթիւ են։

2. Օղբ եւ կեանքը, գրեց Գ. Դր-Վալ. րինյի. — Թրգմ. Ռուսերենից Ե. Տէր-Յակոբեանց. — Թիֆլիս, արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1898: 8°, 68 էջ. գին՝ 10 Կ.:

Մրցանակի արժանացած գրուածք մը՝ ինամբով ալ թարգմանուած. բայց լաւ չէր ըլլար արեօք՝ փոխանակ նոր բառեր հնաբոլու, ասոնէ մը ի վեր գոյութիւն ունեցող տարբարանական բառերը գործածել, որոնք ծանօթացած են մեր գիտական աշխարհին։

3. Բարդական առաճներ. Հաաքազգրեց, Ուստա-Գէորգ Բարխուտարեանց. — Տիֆլիս,

¹ Աւելի ընդարձակ բնագիրը՝ տես — Revue des Revue 31 էջ 412-466 (15 նոյեմբ. 1898).

տպարան Մ. Շարաձէի և ընկ. 1898: 8°, Ե և 52 էջ. գին՝ 20 Կ.:

Ընտիր գործ, բայց փափաքելի է որ յարգ. Հաաքազգրողը իր փափաքը ինքը կատարէր, փոխանակ ուրիշներէն սպասելու՝ այսպիսի առածներու ամբողջական հրատարակութիւնն ընելով, որ կրնայ մեծ լայն սփռել ազգային գրականութեան։

4. Հօրութ-Մարութ. Պատկերներ իրական կեանքից, գրեց Յովհաննէս Մալխասեան. Ա. սաթին գիրք. Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռոտինեանցի. 1898: 8°, 165 էջ. գին՝ 30 Կ.:

Թուրքերէն բառերու տեղ՝ թէեւ ըստ բաւականի ջանացուած է հայերէն բառեր ցնել, բայց զեռ բաւական մաս մը կայ, և զեռ ուրիշ հայերէն գաւառական բառեր, որոնք աւելն ընթերցողի ծանօթ չեն. գուցէ լաւագոյն ըլլար այսպիսի բառերը գրքին վերջը ցանկով մը ցնել։

5. Խորամանկ աղուէսը. գրեց Ա. Մ. Սիւլիցիլի. փոխադրեց Պերմ Պոստեանց, Մանկական գրադարան. Թիֆլիս, Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի, 1898. Մեծ 25 էջ, գին՝ 10 Կ.:

Գայլի և աղուեսի պատմութիւն մը՝ զոր կը պատմէ Զարման դայեակ՝ լսելով անոնց բերնէն, անոնց ինկած որոգայթին (փոս) մէջ ինկած պահուն։

✱



ԶԱՆՈՒԾԱԿԱՆ ԶԱՆՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ազգային թատրոնները. — 2. Ազգային ռահգործութիւնը. — 3. Ամառիտ և Արդիւն. — 4. Գ. Խաթաթեանց. — 5. Մուրատ Ռափայէլիամ վարժարան. — 6. Միլիթարեամ վարժ. ի Տրապիզոն. — 7. Գրաքայր ամերթեմէտ է. — 8. Պոռֆ. Գարրիէր և Արեւել. վարժ. ի Փարիզ. — 9. Նոր Մասիսը. — 10. Ազգային գիտաւոր մը ի շնորհիւ. — 11. Սրբագրութիւն մը. — 12. Ազգային ընկերութիւն ի Լոնտոն. — 13. Քիչ մ'ալ բիւրակէմ։

4. Ազգային Թատրոններն. — Ազգային լրագրաց՝ մանաւանդ Ռուսահայոց մեծ խնդրոյ նիւթ եղած են հայկական թատրոններն. որոց վրայ ստեղծ լուրեր կը հաղորդեն։ Այսօր հայ մամուլը սրտաբեկ յօդուածներով կ'ողբայ անուանի հայ թատերախաղերու, Աթաժեանի,